ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի տնօրեն,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

_____Լ.Ա.Ղազանչյան
06.07.2021թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

Զոհրակ Մեխակի Ապրեսյանի՝
«Սեփականության իրավունքի պաշտպանության սահմանադրական երաշխիքները (համեմատական իրավական հետազոտություն և մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկան)» թեմայով ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք - սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Զոհրակ Մեխակի Ապրեսյանի կողմից ներկայացված թեկնածուական ատենախոսությունը նվիրված է սեփականության իրավունքի պաշտպանության սահմանադրական և միջազգային իրավական երաշխիքների համալիր ուսումնասիրությանը և առկա հիմնախնդիրների բացահայտմանը:

Գրախոսվող ատենախոսական աշխատանքի արդիականությունը պայմանավորված է 2015 թ. բարեփոխված ՀՀ Սահմանադրության նոր կարգավորումների համատեքստում մարդու սեփականության իրավունքի իրականացման և դրա պաշտպանության սահմանադրական երաշխիքների ոլորտում առկա հիմնախնդիրների հետազոտության անհրաժեշտությամբ:

Հարկ է նշել, որ ատենախոսությունն ունի կուռ տրամաբանական

եզրակացնել, որ որոշակիորեն հիմնավորված եզրահանգումներով ներկայացվում են մարդու սեփականության իրավունքի իրականացման ու պաշտպանության սահմանադրական ինստիտուտի որոշ հիմնահարցերի գործնական լուծումներ: Ատենախոսությունում ներկայացված դատողություններն ու եզրահանգումները հատկապես սահմանադրական նոր կարգավորումների և միջազգային իրավական երաշխիքների համալիր ուսումնասիրության շրջանակում ունեն գիտաճանաչողական զգալի նշանակություն և կարող են օգտակար լինել առանձին հետազոտությունների և ուսումնասիրությունների համար:

Աշխատանքի շրջանակներում հեղինակը համալիր կերպով կարևորել է հատկացրել սեփականության իրավունքին առնչվող սահմանադրական կարգավորումների ոլորտի եզրութաբանության հիմնահարցերի վերլուծությանը:

Բացի այդ՝ ատենախոսության շրջանակներում անդրադարձ է կատարվել սեփականության իրավունքի և երրորդ անձանց շահերի միջև արդարացի հավասարակշռության երաշխավորման հիմնախնդիրներին, ինչպես նաև սեփականության իրավունքի պաշտպանվածության և դրա նկատմամբ անհամաչափ միջամտության միջև հարաբերակցության հիմնահարցերին:

Քննարկվող աշխատանքի նպատակն է մարդու հիմնական իրավունք հանդիսացող սեփականության իրավունքի պաշտպանվածության աստիճանի բարձրացումը, սեփականատիրոջ իրավունքների և երրորդ անձանց ու հասարակության շահերի միջև արդարացի հավասարակշռության հաստատումը, միջազգային լավագույն փորձի ներդրումը ՀՀ իրավական համակարգ:

Դրսևորվող հետազոտության գիտական նորույթն արտահայտված է աշխատանքի եզրահանգումներում, տեսական հետևություններում և աշխատանքում առկա գործնական առաջարկություններում:

Քննարկվող հետազոտության տեսական և գործնական նշանակությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ աշխատանքում տեղ գտած վերլուծությունները կարող են նպաստել հետազոտության թեմայի վերաբերյալ տեսական պատկերացումների ընդլայնմանը, տեսական հիմք հանդիսանալ նմանատիպ աշխատանքների մշակման համար, ինչպես նաև օգտագործվել սեփականության իրավունքի դատական ու արտադատական պաշտպանության և

սեփականության իրավունքի պաշտպանվածության մակարդակի բարձրացմանն ուղղված օրենսդրական փոփոխությունների կատարման ժամանակ:

Աշխատանքը գրված է բարձր լեզվաոճական եղանակով և իրավաբանական եզրութաբանության պահանջներին համապատասխան: Ավելին, աշխատանքում հեղինակը լիարժեքորեն օգտագործել է միջազգային փաստաթղթեր, նորմատիվ-իրավական նյութերը, դատական պրակտիկայի նյութեր, տեսական-մասնագիտական գրականություն, ինչի շնորհիվ ատենախոսությունում ձևակերպված եզրահանգումները և գործնական առաջարկությունները ներկայանում են գիտականորեն հիմնավորված և տրամաբանորեն փաստարկված:

Դրական գնահատելով աշխատանքը, այնուհանդերձ անհրաժեշտ ենք գտնում ներկայացնել որոշակի դիտողություններ և նկատառումներ, որոնք հանգում են հետևյալին.

1. Պաշտպանության ներկայացվող 1-ին կետի դրույթում հեղինակը որպես նորույթ դիտարկում է այն, որ՝ Սահմանադրության 74-րդ հոդվածի բովանդակության համատեքստում օտարերկրյա կազմակերպությունների նկատմամբ պետք է կիրառելի լինեն օտարերկրյա քաղաքացիների հիմնական իրավունքները, ազատությունները և դրանց սահմանափակումները (էջ 8, 25-27): Կարծում ենք, որ ասվածը հանրաճանաչ է և այդ կապակցությամբ հեղինակի կողմից լրացուցիչ հիմնավորման կարիք ունի այն, թե ինչով է պայմանավորված դրա գիտականության նոր տարրի նշանակությունը:

2. Պաշտպանության ներկայացվող 4-րդ կետի շրջանակում հեղինակը հաշվի առնելով այն, որ պետությունն ունի մարդու հիմնական իրավունքների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր սահմանող օրենսդրության ստեղծման պոզիտիվ պարտականություն՝ հիմնավոր է այն տեսակետը, որ ժառանգատուի պարտատիրոջ կողմից պահանջ ներկայացնելու համար նախատեսված ժամկետը բաց թողնելու դեպքում վերջինիս պետք է տրվի այդ ժամկետի բացթողնման պատճառը հարգելի համարելու և այդ ժամկետը վերականգնելու հնարավորություն (էջ 9, 95-99):

Կարծում ենք, որ նշված կետի դրույթը լրացուցիչ հիմնավորման կարիք ունի, քանի որ սահմանադրական իրավունքի տեսության տեսանկյունից

գիտական նորույթ չի կարող հանդիսանալ՝ «ժառանգատուի պարտատիրոջ կողմից պահանջ ներկայացնելու համար նախատեսված ժամկետի (...) բացթողնման պատճառը հարգելի համարելու և այդ ժամկետը վերականգնելու հնարավորությունը»:

3. Ատենախոսական աշխատանքի 2-րդ գլխում հեղինակը քննարկման է ներկայացնում «Հարկերը և պարտադիր այլ վճարները՝ որպես սեփականության իրավունքի սահմանափակում» ենթագլուխը, որը կարևոր նշանակություն ունի գրախոսվող ատենախոսության թեմայի և 2015 թ. սահմանադրական նոր կարգավորումների շրջանակում: Այդ կապակցությամբ, կարծում ենք, որ անհրաժեշտ է որպեսզի բացահայտվեր հարկերի սահմանման սահմանադրական պահանջի և սեփականության իրավունքի պաշտպանության բովանդակային առանձնահատկությունները, ինչպես նաև «Սեփականության իրավունքը» վերտառությամբ Սահմանադրության 60-րդ հոդվածի կարգավորումների համակարգում դրանք ներառելու անհրաժեշտությունն ու նշանակությունը (էջ 99-109):

4. Ատենախոսության որոշ էջերում ամբողջությամբ պահպանված չեն հղումներին և օգտագործված գրականության ցանկին վերաբերող պահանջները, ինչպես նաև առկա են ոչ ճիշտ իրավական ձևակերպումներ և օտար լեզվով ներկայացված արտահայտություններ՝ առանց բացահայտելու դրանց հայերեն բովանդակությունը, մասնավորապես, «անուղղակի զոհեր» (էջ 35), «անձը կարող է ունենալ նաև միայն usus և fructus» (էջ 47), կամ «որոնք միասին կոչվում են usufruct (ուզուրֆրուկտ)» (էջ 47) և այլն):

Այնուամենայնիվ, վերոնշյալ դիտողություններն, ըստ էության, մասնակի բնույթ են կրում և բնավ չեն արժեզրկում ընդհանուր առմամբ հաջողված ատենախոսության դրույթները:

Ատենախոսությունը և սեղմագիրը պատրաստված են նմանատիպ աշխատանքներին ներկայացվող պահանջներին համապատասխան, իսկ ՀՀ ԲՈԿ-ի կողմից հաստատված գիտական հետազոտությունների համար ընդունելի պարբերականներում հեղինակի կողմից հրատարակած գիտական հոդվածներում լիարժեքորեն արտացոլված են ատենախոսության հիմնական դրույթները:

Ատենախոսության թեման և բովանդակությունը համապատասխանում են ընտրված մասնագիտությանը:

Ելնելով վերոգրյալից, գտնում ենք, որ **Զոհրակ Մեխակի Ապրեսյանի** «Սեփականության իրավունքի պաշտպանության սահմանադրական երաշխիքները (համեմատական իրավական հետազոտություն և մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկան)» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը գիտական նորույթ պարունակող, ամբողջական, և ինքնուրույն ավարտուն հետազոտական աշխատանք է, ինչը հիմք է տալիս եզրակացնելու, որ ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի «ՀՀ Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգով» սահմանված պահանջներին, իսկ հեղինակը արժանի է, ԺԲ.00.02.- «Հանրային իրավունք- սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի պետաիրավական հետազոտությունների բաժնի 2021 թ. հուլիսի 2-ի նիստում, որին մասնակցել են բաժնի վարիչ, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր Հ. Մ. Ստեփանյանը, գլխավոր գիտաշխատող, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Հ. Սաֆարյանը, իրավագիտության թեկնածուներ՝ Լ. Ա. Ղազանչյանը, Ա. Վ. Շուքուրյանը, Ա. Ա. Աբրահամյանը և Բ. Վ. Ղազինյանը:

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի Պետաիրավական
հետազոտությունների բաժնի վարիչ,
Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հ.Մ. Ստեփանյան